ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«11» հոկտեմբեր 2022թ. N 150-Ա/1

«ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 13-Ի N 92-Ա/1 ՀՐԱՄԱՆՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի օգոստոսի 11-ի N 831-Ն որոշման 2-րդ և 5-րդ կետերի պահանջները.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հաստատել «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ կազմակերպություն) կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:
2. Կազմակերպության տնօրենին՝ սույն հրամանն ուժի մեջ մտնելուց հետո երեք աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել կազմակերպության կանոնադրության պետական գրանցման հետ կապված գործողությունների իրականացումը:
3. Սույն հրամանի 2-րդ կետի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության գլխավոր քարտուղարին:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2016 թվականի սեպտեմբերի 13-ի «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը հաստատելու և Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի 2007 թվականի սեպտեմբերի 25-ի թիվ 125-Ա/1 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 92-Ա/1 հրամանը:

Ն. ՄԿՐՏՉՅԱՆ

Հավելված
Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի 2023 թվականի հոկտեմբերի 11-ի
թիվ 150-Ա/Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Երեխայի և ընտանիքի աջակցության կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող ոչ առևտրային կազմակերպություն է:

2. Կազմակերպությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Սոցիալական աջակցության մասին» «Երեխայի իրավունքների մասին» օրենքներով, Ընտանեկան օրենսգրքով, իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

3. Կազմակերպությունը ստեղծված է համարվում օրենքով սահմանված կարգով պետական գրանցման պահից:

4. Կազմակերպության գործունեությունը ֆինանսավորվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների կազմակերպությունների, ֆիզիկական անձանց նվիրատվություններից, բարեգործական նպատակներով տրամադրվող միջոցներից, իր կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեությունից և օրենքով չարգելված այլ գործունեությամբ ստեղծված միջոցներից:

5. Կազմակերպությունը որպես սեփականություն ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունը կարող է կնքել պայմանագրեր, իր անունից ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

6. Կազմակերպությունը այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

7. Հիմնադիրը պատասխանատու չէ կազմակերպության պարտավորությունների, իսկ կազմակերպությունը՝ իր հիմնադրի պարտավորությունների համար:

8. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության պետական զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք ու դրոշմակնիք, ինչպես նաև ձևաթղթեր:

9. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, հաշվարկային հաշիվ պետական գանձապետարանում՝ Հայաստանի Հանրապետության արժույթով և արտարժույթով:

10. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները հաշվարկում և վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափերով:

11. Կազմակերպությունը պատասխանատու է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները բավարարող կոմունալ, սանիտարահիգիենիկ և հակահրդեհային անվտանգության անհրաժեշտ պայմանների, իր գործունեության համար անհրաժեշտ ընդհանուր ու բնակելի մակերեսին, անձնակազմին (աշխատողների թվին և հաստիքներին), նրանց աշխատանքային պայմաններին, կազմակերպությունում միաժամանակյա խնամք ստացողների առավելագույն թվին, նրանց տրամադրվող սննդի չափաքանակին, դրա էներգետիկ արժեքին, հագուստին, սպիտակեղենին, կոշկեղենին, անկողնային ու անձնական հիգիենայի պարագաների չափորոշիչներին, կազմակերպության անվտանգության ապահովմանը և այլ պայմաններին ներկայացվող պահանջների պահպանման, ինչպես նաև շահառուների խնամքի և դաստիարակության համար անհրաժեշտ սոցիալական նվազագույն չափորոշիչների կիրառումն ապահովելու համար:

12. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Նուբարաշեն, Զնքուշի 14:

13. Կազմակերպության անվանումն է՝

1) հայերեն լրիվ՝ «ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ.

2) հայերեն կրճատ՝ «ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ.

3) ռուսերեն լրիվ՝ ГОСУДАРСТВЕННАЯ НЕКОММЕРЧЕСКАЯ ОРГАНИЗАЦИЯ «ЦЕНТР ПОДДЕРЖКИ РЕБЕНКА И СЕМЬИ».

4) ռուսերեն կրճատ՝ «ЦЕНТР ПОДДЕРЖКИ РЕБЕНКА И СЕМЬИ» ГНО.

5) անգլերեն լրիվ՝ «CHILD AND FAMILY SUPPORT CENTER» STATE NON COMMERCIAL ORGANIZATION.

6) անգլերեն կրճատ՝ «CHILD AND FAMILY SUPPORT CENTER» SNCO.

2. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

13. Կազմակերպության գործունեության նպատակն է.

1) Կազմակերպել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխաներին և նրանց ընտանիքներին առավելագույնը 1 տարի ժամկետով ցերեկային աջակցության ծառայությունների տրամադրումը,

2) նպաստել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխայի (ընտանիքի) հիմնական պահանջմունքների և սոցիալական կարիքների բավարարմանը,

3) խթանել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի (ընտանիքի) ներուժի և կարողությունների բացահայտումը, ինքնօգնության, ինքնորոշման ու ծագած հիմնախնդիրներն իմքմուրոյն լուծելու ունակությունների զարգացումը,

4) ստեղծել պայմաններ՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի ներառումը հասարակություն ապահովելու համար, օժանդակել նրա սոցիալ-մանկավարժահոգեբանական և առողջական խնդիրների լուծմանը,

5) կանխարգելել կյանքի դժվարին իրավիճակը և սոցիալական մեկուսացումը,

14. **Կազմակերպության գործունեության առարկան է.**

1) 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխային և նրա ընտանիքին ցերեկային աջակցության ծառայությունների տրամադրումը,

2) երեխայի իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն աջակցելը:

3) 2-18 տարեկան կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխայի և նրա ընտանիքի անդամների մանկավարժահոգեբանական առանձնահատկությունների և սոցիալական կարիքների գնահատումը, աջակցության անհատական ծրագրի կազմումը և դրան համապատասխան ծառայությունների տրամադրումը,

4) 2-18 տարեկան երեխաների սոցիալ-հոգեբանական օգնության, իրավական խորհրդատվության, ուսումնադաստիարակչական ծառայությունների, մասնագիտական կողմնորոշման, արվեստի միջոցով թերապիայի, օկուպացիոն թերապիայի (շտկիչ վարժանքներով թերապիա) տրամադրումը, աշխատանքային թերապիայի, առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը, ազատ ժամանցի, սոցիալական ներառմանն ուղղված՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ միջոցառումների կազմակերպումը:

3. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

14. **Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ գործառույթները.**

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված 2-18 տարեկան երեխաների ընդունելությունը (ընդ որում՝ երեխային խնամք տրամադրելու մասին գրավոր դիմումը կազմակերպություն ներկայացնելիս, կազմակերպության սոցիալական աշխատանքի մասնագետից, բժշկից և հոգեբանից կազմված մասնագիտական խմբի միջոցով իրականացնում է երեխայի կենսապայմանների ուսումնասիրություն և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ գործառույթներ, իսկ սեփական նախաձեռնությամբ երեխային կազմակերպությունում խնամք տրամադրելու նպատակով իրականացնում

է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված միջոցառումներ՝ այդ երեխայի ծնողի կամ այլ օրինական ներկայացուցչի գրավոր համաձայնության դեպքում),

2) երեխայի օրինական ներկայացուցչի հետ կնքում է պայմանագիր՝ կազմակերպությունում երեխային խնամք տրամադրելու վերաբերյալ, ընդ որում, 10 տարին լրացած երեխայի դեպքում՝ հաշվի է առնվում նաև նրա կարծիքը,

3) ապահովում է երեխայի իրավունքների և շահերի պաշտպանությունը և ստեղծում է ընտանեկան միջավայրին մոտ բարենպաստ պայմաններ, որոնք նպաստում են երեխայի մտավոր, հուզական ոլորտի և ֆիզիկական զարգացմանը:

4) ապահովում է երեխայի անվտանգությունը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված անվտանգության կանոններին համապատասխան:

5) ապահովում է երեխայի պաշտպանությունը՝

- հոգեբանական, տնտեսական և ֆիզիկական բռնությունից.
- դաժան վերաբերմունքից,
- երեխայի թրաֆիքինգից կամ շահագործումից.
- այլ հանցագործություններից.
- անուշադրությունից և անարդարությունից.
- առողջությունը վտանգող նյութերից և կյանքը վտանգող պայմաններից.
- չարաշահումից և անտեսումից.
- բուլլինգից:

6) Երեխայի շահերից հանդես եկող անձանց (ծնողական իրավունքից չզրկված ծնողներ կամ օրինական ներկայացուցիչներ, մերձավոր ազգականներ)՝ հաստատության անձնակազմի անօրինական գործողությունները և անգործությունը բողոքարկելու դեպքում հաստատությունն իրականացնում է երեխայի իրավունքի պաշտպանության համարժեք միջոցառումներ:

7) տրամադրում է հարմարավետ, անվտանգ, հուսալի ավտոտրանսպորտային միջոցներ՝ երեխաների ծառայությունների տրամադրման գործընթացին աջակցելու նպատակով:

8) ապահովում է երեխայի խնամքը, պաշտպանությունը այնպես, որ հնարավոր լինի արագ բացահայտել երեխաների նկատմամբ բռնության կամ անտեսման նախկինում կատարված կամ առկա դեպքերը կամ դրա հետ կապված որևէ ռիսկ և ձեռնարկել անհրաժեշտ համապատասխան միջոցներ:

9) անհրաժեշտ միջոցներ է ձեռնարկում ստեղծելու երեխայի համար անվտանգ պայմաններ և խելամիտ հարմարեցումներով ապահովված միջավայր՝ սանհանգույցներ՝ տարանջատված ըստ սեռի, տարիքային խմբերի և հաշմանդամության:

10) ապահովում է երեխաներին՝ իրենց համար մատչելի ձևաչափով՝ Հայաստանի Հանրապետությունում երեխայի իրավունքների պաշտպանությամբ զբաղվող

պետական և տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև մարդու իրավունքների պաշտպանի և հանրային պաշտպանի գրասենյակների մասին, ներառյալ նրանց հեռախոսահամարների մասին տեղեկությունները, այդ թվում հատուկ (հրատապ) օգնության համար նախատեսված շուրջօրյա թեժ գծերի (հոգեբանական, իրավաբանական և այլն) և հասցեների (փոստային և էլեկտրոնային), ինչպես նաև նշված մարմիններին երեխաների անարգել մուտքի հնարավորությունը և երեխաների կողմից անվճար իրավաբանական օգնություն ստանալու հնարավորությունը «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն:

11) կազմակերպությունում շահառուի ընդունումից հետո յոթօրյա ժամկետում ապահովվում է նրա անհատական սոցիալական ծրագրի կազմումը և դրան համապատասխան՝ սոցիալ-հոգեբանական վերականգնման համար անհրաժեշտ միջոցառումների իրականացումը,

12) կազմակերպությունում գտնվող երեխաների աջակցության անհատական սոցիալական ծրագիրը մշակում, իրականացնում և վերանայում են կազմակերպության համապատասխան աշխատողները և մասնագետները (մանկավարժ, հոգեբան, սոցիալական աշխատող, բժիշկ կամ ավագ բուժքույր), երեխայի և, հնարավորության դեպքում, երեխայի ծնողների կամ ընտանիքի անդամների մասնակցությամբ, եթե դա բխում է երեխայի շահերից: Ծնողական իրավունքներից չզրկված ծնող (ծնողներ) կամ օրինական ներկայացուցիչներ կամ մերձավոր ազգականներ ունեցող երեխայի աջակցության անհատական սոցիալական ծրագիրը կազմելիս՝ պատշաճ ուշադրություն է դարձվում ոչ միայն երեխայի, այլ նաև նրանց կարիքներին:

13) կազմակերպությունում խնամվող շահառուի անհատական սոցիալական ծրագրով կազմակերպությանը վերապահված իրավասությունների շրջանակներում՝ ապահովում է նրա անհատական սոցիալական ծրագրով նախատեսված միջոցառումների իրականացումը, անհատական սոցիալական ծրագրով սահմանված խմբային (բազմամասնագիտական) քննարկումներին կազմակերպության սոցիալական աշխատողի մասնագետի մասնակցությունը,

14) կազմակերպությունում խնամվողներին սոցիալական ծառայությունները տրամադրում է նրանց գնահատված սոցիալական կարիքներին համապատասխան, ձեռնարկվում է անհրաժեշտ միջոցներ կրթական կարիքների գնահատման նպատակով,

15) անհատական սոցիալական ծրագրի իրականացման արդյունքները գնահատում է ըստ անհրաժեշտության, իսկ յուրաքանչյուր եռամյսակը մեկ անգամ՝ պարտադիր, որի արդյունքում իրականացված փոփոխությունները պարտադիր մուտքագրում են նաև էլեկտրոնային տեղեկատվական համակարգ՝ այդպիսով տեղեկատվությունը հասանելի դարձնելով լիազոր մարմնին,

ԳՈՒՅՔԱՅԻՆ ԽՆԴՐԵՐ ՔԱՐՏՈՒՂԱՐԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ SECRETARIAT

16) իրականացնում է կազմակերպությունում խնամվողների սոցիալական հմտությունների և կարողությունների վերականգնում և զարգացում, կենցաղավարման և հաղորդակցման (շփման) հմտությունների ուսուցանում,

17) լիազոր պետական մարմնի հետ համաձայնեցնելով՝ ստեղծում է բազմամասնագիտական թիմ՝ ընդգրկելով նաև սոցիալական աջակցության տարածքային մարմինների աշխատակցին՝ երեխայի /ընտանիքի/ հոգեբանամանկավարժական առանձնահատկությունների և սոցիալական կարիքների բազմակողմանի և խորը գնահատում իրականացնելու նպատակով,

18) համագործակցում է երեխաների հիմնախնդիրներով զբաղվող տեղական ինքնակառավարման, պետական մարմինների և հասարակական կազմակերպությունների հետ,

19) կազմակերպությունում ցերեկային խնամք ստացող երեխան ապահովվում է մեկանգամյա առողջ սննդով, երեխան մշտապես ապահովվում է մաքուր խմելու ջրով՝ առանց քանակի սահմանափակման,

20) կազմակերպությունը՝ պատշաճ ձևով, առանց նսեմացնելու երեխայի պատիվն ու արժանապատվությունը և ընտրության հնարավորությանը, ապահովում է ցերեկային խնամք ստացող երեխայի կերակրումը, եթե երեխան տարիքային առանձնահատկություններով, առողջական վիճակով կամ այլ հանգամանքներով պայմանավորված՝ ինքնուրույն չի կարողանում սնվել,

21) կազմակերպություն հաճախող հաշմանդամություն ունեցող և կենտրոնից առնվազն 500 մետր հեռավորությամբ բնակվող տրանսպորտից օգտվող երեխաների համար կենտրոնն ապահովում է տրանսպորտի ծախսերի դրամական փոխհատուցում օրական նվազագույնը՝ 200 դրամի և առավելագույնը՝ 400 դրամի չափով,

22) երեխայի ինտեգրումը հաստատությունում ապահովվում է հաշվի առնելով նրա նոր սոցիալական միջավայրին հարմարվելու անհատական առանձնահատկությունները, հատուկ ուշադրություն դարձնելով հաշմանդամություն ունեցող երեխայի միջավայրին հարմարվելու, նրան անկախ և ինքնուրույն դարձնելու ուղղությամբ տարվող աշխատանքներին:

23) կազմակերպությունում խնամվողներին տրամադրում է խաղալիքներ, գրենական պիտույքներ, անձնական օգտագործման իրեր և հիգիենայի պարագաներ,

24) ապահովում է կազմակերպությունում ցերեկային խնամք ստացողների անձնական հիգիենան ինքնուրույն կամ անհրաժեշտության դեպքում՝ աշխատողների օգնությամբ հոգալու հնարավորությունը,

25) անհրաժեշտության դեպքում կազմակերպում է կազմակերպությունում խնամվողների՝ առաջնային բժշկական օգնության և սպասարկման տրամադրումը՝ համապատասխան ամբուլատոր բժշկական հաստատությունում,

26) ձեռնարկում է անհրաժեշտ միջոցներ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո

գտնվող՝ նախադպրոցական և հանրակրթական ուսումնական հաստատություններից դուրս մնացած (կամ այդ հաստատություններ չհաճախող) երեխաներին ուսումնական հաստատություններում տեղավորելու և նրանց հաճախելիությունն ապահովելու համար,

27) իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների վարքագծի և զարգացման շեղումների կանխարգելմանը, առողջ ապրելակերպի ձևավորմանը, ստեղծագործական ընդունակությունների զարգացմանը միտված հոգեբանական վերականգնմանն ուղղված աշխատանքներ,

28) կազմակերպությունում խնամք ստացող հաշմանդամություն ունեցող երեխաների վերականգնողական անհատական ծրագրերի համաձայն, աջակցում է նրանց վերականգնողական օգնության տրամադրման և սոցիալական ներառման գործընթացին՝ այդ նպատակով համագործակցելով բուժատեխնիկական հանձնաժողովի, վերականգնողական օգնություն տրամադրող մարմինների և կազմակերպությունների, սոցիալական աջակցության բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմնի աշխատակազմում չընդգրկված և կառավարման ոլորտից դուրս գործող սոցիալական ծառայություններ տրամադրող տարածքային մարմինների՝ սոցիալական աջակցության տարածքային գործակալությունների և բաժինների հետ,

29) իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների և նրանց ընտանիքների սոցիալ-հոգեբանական, սոցիալ-մանկավարժական, սոցիալ-բժշկական, սոցիալ-իրավական խնդիրների լուծմանը,

30) իրականացնում է կազմակերպությունում խնամք ստացող երեխաների ընտանիքների, կոնֆլիկտային իրավիճակների կանխարգելմանն ու հաղթահարմանն ուղղված աշխատանքներ՝ նպաստելով ընտանիքում բարենպաստ մթնոլորտի վերականգնմանը,

31) կազմակերպությունում խնամք ստացող դաստիարակության դժվարություններ ունեցող, վնասակար սովորություններով, ինչպես նաև հակասոցիալական վարք դրսևորած երեխաներին տրամադրում է թիրախավորված աջակցություն՝ ուղղված ընտանիքի հետ սոցիալական կապերի ամրապնդմանը, վնասակար սովորություններից ձերբազատմանը և սոցիալական ներառմանը, այդ նպատակով, ըստ անհրաժեշտության համագործակցելով նաև «Սոցիալական աջակցության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ իր գտնվելու վայրի աջակցող ցանցի և միջգերատեսչական սոցիալական համագործակցության կողմերի հետ,

32) ըստ անհրաժեշտության, կազմակերպությունում խնամվողներին տրամադրում է միջանձնային հարաբերություններում դժվարությունների հաղթահարմանը և անձնային ներուժի զարգացմանն ուղղված խորհրդատվություն,

33) կազմակերպությունում խնամվողներին ցուցաբերում է աջակցություն սեփական կարողությունների գիտակցման բարելավման, ինքնագնահատականի բարձրացման նպատակով,

34) կազմակերպությունում ծառայություն ստացողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ըստ անհրաժեշտության նրանց տրամադրում է հիմնական պահանջմունքները և սոցիալական կարիքները բավարարելու ուղիներ և եղանակներ գտնելու, ստեղծված իրավիճակին համարժեք սոցիալական ծառայություններ ստանալու վերաբերյալ խորհուրդներ ու առաջարկություններ, ինչպես նաև սոցիալական պաշտպանության ոլորտում նրանց իրավունքների և դրանց իրացման վերաբերյալ տեղեկատվություն,

35) կազմակերպությունում ծառայություն ստացողների տարիքային առանձնահատկությունները հաշվի առնելով՝ ըստ անհրաժեշտության տրամադրում է նրանց իրավունքների և պարտականությունների, իրավական այլ հարցերի վերաբերյալ խորհրդատվություն,

36) կազմակերպությունում ցերեկային խնամք ստացող երեխաների ընտանիքների համար կազմակերպում է ուսուցման դասընթացներ՝ ուղղված քաղաքացիական ակտիվ և արդյունավետ կենսակերպի ձևավորմանը, միջանձնային հարաբերությունների կարգավորմանը, ծնողավարման, կենցաղավարման հմտությունների ձևավորմանն ու զարգացմանը,

37) իր սպասարկման տարածքում իրականացնում է ընտանիքների և երեխաների հիմնախնդիրների լուծմանը վերաբերող, երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված հանրային իրազեկման և խորհրդատվական բնույթ կրող աշխատանքներ,

38) իր իրավասությունների շրջանակներում աջակցում է կազմակերպությունում խնամք ստացող, ինչպես նաև իր սպասարկման տարածքում բնակվող՝ կյանքի դժվարին իրավիճակում հայտնված կամ կյանքի դժվարին իրավիճակում հայտնվելու վտանգի (ռիսկի) ներքո գտնվող երեխաների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանն ուղղված աշխատանքներին,

39) մշտապես համագործակցում է խնամվողների կրթական հաստատության հետ, իսկ կրթության առանձնահատուկ պայմանի կարիք ունեցողներ պարագայում՝ ակտիվորեն ընդգրկվում է նաև կրթական գործընթացում լիարժեք ներառմանն ուղղված աշխատանքներին,

40) կազմակերպում է ծառայություն ստացողների կրթությունը հանրակրթական, միջին և նախնական մասնագիտական ուսումնական հաստատություններում, ինչպես

նաև նպաստում նրանց հետագա բարձրագույն կրթություն ստանալու հնարավորությանը,

41) հսկողություն է իրականացնում կազմակերպությունում ցերեկային խնամք ստացողների առաջադիմության և կրթական հաստատություն հաճախելու նկատմամբ,

42) կազմակերպում է աշխատանքներ՝ ուղղված կազմակերպության աշխատողների որակավորման բարձրացմանը, նրանց կարողությունների և հմտությունների զարգացմանը,

43) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ գործառույթներ:

4. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՈՒՅՔԸ

15. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է կազմակերպության հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում արտադրված և ձեռք բերված գույքից:

16. Հիմնադրման ժամանակ Կազմակերպությանը հիմնադրի կողմից որպես սեփականություն հանձնվող գույքի չափը սահմանվում է Կազմակերպության հիմնադրման մասին որոշմամբ: Հիմնադրման ժամանակ Կազմակերպությանը հիմնադիրը չի կարող որպես սեփականություն հանձնել նվազագույն աշխատավարձի տասհազարապատիկից ավելի արժողությամբ գույք, եթե օրենքով կամ հիմնադրի որոշմամբ այլ բան նախատեսված չէ:

17. Կազմակերպության գույքի ձևավորման աղբյուր կարող են հանդիսանալ նաև Հայաստանի Հանրապետության ու օտարերկրյա պետությունների իրավաբանական և ֆիզիկական անձանց կատարած ներդրումները, բարեգործական, նպատակային հատկացումներն ու նվիրատվությունները, կտակած գույքը:

18. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքներին, հիմնադրի, լիազորված պետական մարմնի որոշումներին և սույն կանոնադրությանը համապատասխան՝ իր հայեցողությամբ տիրապետել, տնօրինել և օգտագործել սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները:

19. Կազմակերպությանը սեփականության իրավունքով պատկանող գույքի նկատմամբ հիմնադիրը չունի իրավունքներ, բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

20. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

21. Կազմակերպության սեփականության վրա կարող է բռնագանձում տարածվել միայն դատական կարգով:

22. Հիմնադրի որոշմամբ կազմակերպությանն անժամկետ ու անհատույց օգտագործման իրավունքով կարող է ամրացվել ցանկացած գույք:

23. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնել իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը:

24. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարել, գրավ դնել, հանձնել անհատույց օգտագործման:

25. Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը պետության անունից հանձնել վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի որոշմամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը մեկ տարուց ավելի չի կարող սահմանվել, բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի:

26. Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են:

27. Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

28. Հիմնադրի կողմից գույքը կազմակերպության ամրացնելը հիմք չէ այդ գույքի նկատմամբ հիմնադրի կամ երրորդ անձանց իրավունքները դադարեցնելու կամ փոփոխելու համար:

29. Հիմնադրի կողմից կազմակերպությանն ամրացված անշարժ գույքի կամ պետական պարտադիր գրանցման ենթակա գույքի նկատմամբ կազմակերպության օգտագործման իրավունքը ծագում է դրանց նկատմամբ իրավունքի պետական գրանցման պահից:

5. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

30. Կազմակերպությունն իր հիմնական գործունեությանը զուգընթաց ձեռնարկատիրական գործունեությամբ կարող է զբաղվել միայն օրենքով կամ հիմնադրի որոշմամբ ուղղակիորեն նախատեսված դեպքերում և գործունեության տեսակներով: Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակներով կազմակերպությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի հիման վրա:

31. Կազմակերպությունը կարող է իրականացնել ձեռնարկատիրական գործունեության հետևյալ տեսակները՝

1) վճարովի հիմունքներով տրամադրում է հետևյալ սոցիալական ծառայությունները (սոցիալական աջակցության վճարովի (համավճարով) ծառայություններ)՝

ա. դպրոցական ժամերից հետո դպրոցահասակ երեխաների հետ ուսումնական լրացուցիչ պարապմունքների անցկացում,

բ. հաշմանդամություն ունեցող երեխաներին տնային պայմաններում խնամքի տրամադրում,

գ. ուսուցում երգի, պարի, նկարչության, կարուձևի և այլ խմբակներում.

2) գորգեղենի, ձեռագործ ապրանքների, փայտե արտադրատեսակների և հուշանվերների արտադրություն:

32. Կազմակերպության գործունեության ընթացքում առաջացած շահույթն օգտագործվում է սույն կանոնադրությամբ նախատեսված նպատակների իրականացման համար՝ հիմնադրի սահմանած կարգով:

33. Կազմակերպությունը հարկերը, տուրքերը և պարտադիր այլ վճարները վճարում է շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպությունների համար նախատեսված կարգով ու չափով:

6. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

34. Կազմակերպության կառավարումն իրականացնում են հիմնադիրը, հիմնադրի լիազորած պետական մարմինը՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ լիազորված պետական մարմին) և գործադիր մարմինը՝ ի դեմս տնօրենի:

35. Կազմակերպության հիմնադիրն ունի Կազմակերպության գործունեությանը և կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք, բացառությամբ «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի:

36. Հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

1) կազմակերպության հիմնադրումը,

2) կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը,

3) կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը:

37. Կազմակերպության ընդհանուր կառավարումն իրականացնում է լիազորված պետական մարմինը: Լիազորված պետական մարմինը՝

1) իրականացնում է պետական կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում է նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ անպատշաճ իրականացման համար,

2) հաստատում է կազմակերպության կանոնադրությունը և դրանում կատարվող փոփոխությունները,

3) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,

4) հաստատում է կազմակերպությանը սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ պետությանը պատկանող գույքի կազմը,

5) իրականացնում է վերահսկողություն կազմակերպության գործունեության նկատմամբ,

6) հիմնադրի անունից կազմակերպության տնօրենի հետ կնքում է աշխատանքային պայմանագիր,

7) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրություններն ու ցուցումները,

8) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում է նրա գործունեության վերստուգման արդյունքները,

9) վերահսկողություն է իրականացնում կազմակերպությանն ամրացված պետական սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ,

10) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության սեփականության պահպանության նկատմամբ, իսկ օրենքով, հիմնադրի որոշմամբ կամ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս նրա գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար,

11) համաձայնություն է տալիս կազմակերպության գույքը օտարելու կամ վարձակալության հանձնելու համար,

12) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը,

13) նշանակում է կազմակերպության լուծարման հանձնաժողով և հաստատում լուծարման հաշվեկշիռը,

14) իրականացնում է կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը,

15) իրականացնում է «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, հիմնադրի որոշումներով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

38. Կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է տնօրենը, ում պաշտոնի նշանակում և պաշտոնից ազատում է լիազորված պետական մարմինը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

39. Տնօրենն օրենքով, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով, սույն կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է Կազմակերպության գործունեությունը և կրում է պատասխանատվություն օրենքների, իրավական այլ ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

40. Տնօրենի հետ կնքվում է պայմանագիր, որը հիմնադրի անունից ստորագրում է լիազորված պետական մարմնի ղեկավարը: Պայմանագրով սահմանվում են տնօրենի իրավունքները, պարտականությունները, պատասխանատվությունը և փոխհարաբերությունները լիազորված պետական մարմնի հետ, նրա աշխատանքի վարձատրման պայմանները, պայմանագրի դադարման՝ օրենսդրությամբ սահմանված

հիմքերը, որոնք անհրաժեշտ կգտնեն պայմանավորվող կողմերը: Պայմանագրի դրույթները չեն կարող հակասել Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրության պահանջներին, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

41. Տնօրենի պաշտոնում կարող է նշանակվել Հայաստանի Հանրապետության այն գործունակ չափահաս քաղաքացին, որն ունի բարձրագույն կրթություն: Տնօրենը պետք է համապատասխանի օրենքներով և այլ իրավական ակտերով տնօրենի մասնագիտական կրթությանը, որակավորմանը և աշխատանքային փորձին ներկայացվող պահանջներին:

42. Տնօրենը՝

1) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում է նրա շահերը և կնքում է պայմանագրեր,

2) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանդիսանում է մանկատան շահառուների խնամակալը,

3) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, հիմնադրի և լիազորված պետական մարմնի որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները,

4) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

5) աշխատանքի է նշանակում և աշխատանքից ազատում կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում է խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր,

6) պետական ֆինանսների կառավարման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից լիազորված պետական կառավարման մարմնի գանձապետարանում բացում է հաշիվներ,

7) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև,

8) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունը՝ լիազորված պետական մարմնի համաձայնությամբ,

9) հաստատում է կազմակերպության հիմնարկների, մասնաճյուղերի և ներկայացուցչությունների կանոնադրությունները, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին,

10) նշանակում է պետական կազմակերպության հիմնարկների, ներկայացուցչությունների և մասնաճյուղերի ղեկավարներին, նրանց տալիս է համապատասխան լիազորագրեր, եթե սույն լիազորությունը վերապահված չէ կոլեգիալ կառավարման մարմնին,

11) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը,

12) սահմանված կարգով լիազորված պետական մարմին է ներկայացնում կազմակերպության եկամուտների և ծախսերի տարեկան նախահաշիվը,

13) հաստատում է ձեռնարկատիրական գործունեության եկամուտների և ծախսերի նախահաշիվը,

14) հաստատում է բազմամասնագիտական խորհրդի կազմը,

15) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

43. Տնօրենը պատասխանատվություն է կրում օրենքների, այլ իրավական ակտերի, հիմնադրի կամ լիազորված պետական մարմնի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

44. Տնօրենը պարտավոր է չկատարել հիմնադրի և լիազորված պետական մարմնի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը հակասող որոշումները, կարգադրությունները, հրամանները և դրանց չկատարման համար չի կարող ենթարկվել պատասխանատվության:

45. Տնօրենը չի կարող զբաղեցնել այլ պաշտոն կամ կատարել վճարովի այլ աշխատանք, բացի գիտական, մանկավարժական և ստեղծագործական աշխատանքից:

46. Տնօրենը լրիվ գույքային պատասխանատվություն է կրում իր մեղքով կազմակերպությանը և (կամ) պետությանը պատճառած վնասի համար: Նրա լիազորությունների դադարեցումը հիմք չէ պատճառած վնասը հատուցելու պարտականությունը չկատարելու համար:

47. Լիազորված պետական մարմինը պարտավոր է օրենքով սահմանված կարգով լուծել նաև տնօրենի կողմից կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի փոխհատուցման հարցը: Սույն պահանջը չկատարելու հետևանքով կազմակերպությանը կամ պետությանը պատճառված վնասի համար լիազորված պետական մարմինը կրում է լրիվ գույքային պատասխանատվություն:

48. Տնօրենի բացակայության ժամանակ, տնօրենի լիազորություններն իրականացնում է պետական լիազորված մարմնի գրավոր որոշման համաձայն նշանակված այլ անձ:

49. Կազմակերպությունում խնամվողների խնամքի, ուսուցման, բժշկասոցիալական փորձաքննությունը կամ ֆունկցիոնալության գնահատումն ապահովելու, սոցիալ-հոգեբանական վերականգնման, դաստիարակչական հարցերը քննարկելու և լուծելու նպատակով ստեղծվում է բազմամասնագիտական խորհուրդ (այսուհետ՝ խորհուրդ)՝ խորհրդակցական մարմնի կարգավիճակով:

50. Խորհրդի կազմում ընդգրկվում են կազմակերպության տնօրենը, տնօրենի տեղակալը, սոցիալական մանկավարժը, բժիշկը, սոցիալական աշխատողը, այն

դպրոցի (դպրոցների) տնօրենը (տնօրենները), որտեղ սովորում են կազմակերպությունում խնամվողները և այլ մասնագետներ, այլ շահեկից գերատեսչության ներկայացուցիչներ, ինչպես նաև ոլորտային կազմակերպություններ, որոնք լիազոր մարմնի հետ ունեն համագործակցության հուշագիր կամ իրականացնում են պետության կողմից պատվիրակված լիազորություն:

51. Խորհուրդը կազմված է 11 անդամից:

52. Խորհրդի նախագահն ընտրվում է խորհրդի անդամներից՝ խորհրդի աշխատակարգով սահմանված կարգով:

53. Խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր եռամսյակը մեկ անգամ, ինչպես նաև՝ ըստ անհրաժեշտության:

54. Խորհուրդն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) քննարկում և հաստատում է կազմակերպության աշխատանքային պլանը, բուժպրոֆիլակտիկ ծրագրերը, ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագրերը, ինչպես նաև դրանց վերաբերյալ լիազորված պետական մարմին է ներկայացնում համապատասխան առաջարկություններ,

2) քննարկում է կազմակերպության դաստիարակչական խմբերի և անձնակազմի աշխատանքների կազմակերպման հարցերը,

3) քննարկում է դաստիարակների, բժշկական անձնակազմի և այլ աշխատողների աշխատանքային գործունեությունը,

4) քննարկում է կազմակերպությունում խնամվողների հանրակրթության կազմակերպման հետ կապված հարցերը,

5) քննարկում է խնամվողների խնամքի և սպասարկման նոր ձևերի ներդրման նպատակահարմարությունը,

6) քննարկում է կենսաբանական ընտանիքների հետ վերամիավորմանն ուղղված կազմակերպության քաղաքականությունը, 16 և բարձր տարիքի խնամվողների անկախ ապրելակերպին ուղղված ծառայությունները, նրանց մասնագիտական կողմնորոշման, հետագա ուսման կազմակերպման և աշխատանքի տեղավորման հարցերը,

7) քննարկում է խնամվողների խնամքի և դաստիարակության հետ կապված այլ հարցեր:

55. Խորհրդի գործունեության կարգը սահմանվում է խորհրդի հաստատած աշխատակարգով:

56. Կազմակերպության աշխատողների իրավունքները, պարտականությունները և աշխատանքային գործառույթները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով, սույն կանոնադրությամբ, աշխատանքային և կոլեկտիվ պայմանագրով:

7. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

57. Կազմակերպությունը կարող է ունենալ հիմնարկներ, մասնաճյուղեր կամ ներկայացուցչություններ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքին, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կանոնադրությանը համապատասխան:

58. Կազմակերպության հիմնարկները, մասնաճյուղերը կամ ներկայացուցչությունները ստեղծվում են հիմնադրի որոշմամբ, իսկ հիմնադրի կողմից ուղղակիորեն նախատեսված դեպքում՝ լիազորված պետական մարմնի որոշմամբ:

8. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

59. Կազմակերպության գործունեության նկատմամբ վերահսկողությունն իրականացնում են հիմնադիրը, լիազորված պետական մարմինը, հիմնադրի կողմից լիազորված, ինչպես նաև օրենքով նախատեսված այլ պետական կառավարման մարմինները:

60. Կազմակերպությունը հիմնադրի կողմից սահմանված կարգով պարտավոր է հրապարակել իր տարեկան ֆինանսական հաշվետվությունը:

9. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

61. Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել հիմնադրի որոշմամբ՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Կազմակերպությունը կարող է վերակազմակերպվել 100 տոկոս պետական մասնակցությամբ ընկերության կամ հիմնադրամի, ինչպես նաև համայնքային ոչ առևտրային կազմակերպության:

62. Կազմակերպությունը դատական կարգով կարող է վերակազմակերպվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

63. Կազմակերպության լուծարմամբ նրա գործունեությունը դադարում է՝ առանց իրավունքները և պարտականություններն իրավահաջորդության կարգով այլ անձանց անցնելու:

64. Կազմակերպությունը կարող է լուծարվել հիմնադրի որոշմամբ, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Այն կարող է լուծարվել նաև սնանկության հետևանքով:

65. Կազմակերպությունը դատական կարգով կարող է լուծարվել միայն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով:

66. Կազմակերպության լուծարման դեպքում նրա պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած գույքն ուղղվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե:

Կազմված է -----------------2023թ.
Բաղկացած է 18 թերթից:

Տպագրված է ընդամենը 3 օրինակ
ՕՐԻՆԱԿ ______

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Հայաստանի Հանրապետության
աշխատանքի և սոցիալական հարցերի
նախարարի

2023 թվականի _______

N______ հրամանով

Նախարար՝

(ստորագրություն) Նարեկ Մկրտչյան
(անուն,ազգանուն)

«____»______ 2023թ.

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»

ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

«05» մայիսի 2003թ.

Գրանցման համար 278.210.03431

ՀՎՀՀ 00404146
ԳՐԱՆՑՄԱՆ ՎԿԱՅԱԿԱՆ
N 03 Ա 060424

13.09.2016թ.-ին գրանցված կանոնադրության
թիվ _____ փոփոխությունը

«ԳՐԱՆՑՎԱԾ Է»
ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի
գործակալության կողմից

«______» ______________ 2023 թ.

ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

____

«ԵՐԵԽԱՅԻ ԵՎ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Փոփոխություններ)

2023թ.